



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ ԱՐԱ ԱԿԻՇԵԱՆԸ

Հինգշաբթի, 2 Ապրիլ 2009ի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Տիար Արա Ակիշեանի, որ շաբաթ մը առաջ ընտրուած էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արեւմտեան շրջանի հոգաբարձու խորհուրդի ատենապետ: Հանդիպումին ներկայ եղաւ Հիմնադրամին մօտ Ազգ. Առաջնորդարանի ներկայացուցիչ՝ Ազգ. Վարչութեան անդամ Տիար Միեր Տեր Յովհաննէսեան:

Սօտաւորապէս մէկ ժամ տեւած հանդիպումին, խորհրդակցութեան նիւթ եղան Ազգ. Առաջնորդարանի աշխատանքի դաշտերն ու «Հայաստան» հիմնադրամի հայրենասնուէր գործունեութիւնը: Առաջնորդ Սրբազանն ու Տիար Տեր Յովհաննէսեան շնորհաւորեցին Տիար Ա. Ակիշեանը, մաղթելով, որ ան աշխոյժ կերպով շարունակէ վարել Հիմնադրամի աշխատանքները, մանաւանդ, որ ան վերջին տարիներուն արդէն լծուած էր ծառայական այս աշխատանքին: Յարգելի հիւրը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց այս ընդունելութեան համար, ապա, որոշ մանրամասնութիւններ փոխանցեց Հիմնադրամի անմիջական ծրագիրներուն ու ընթացքի մէջ եղող աշխատանքներուն մասին, որոնք կը կարօտին գաղութիս բոլոր միաւորներուն գորակցութեան ու աջակցութեան: Ան պատրաստակամութիւն յայտնեց սերտօրէն գործակցելու Ազգ. Առաջնորդարանիս ու Հիմնադրամի անդամ բոլոր միաւորներուն հետ, ի խնդիր Հայաստանի ու Արցախի ծրագիրներու իրականացման:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանն ու Տիար Տեր Յովհաննէսեան բարի երթ մաղթեցին Տիար Արա Ակիշեանի, իր առաքելութեան իրագործման մէջ:

PRELATE WELCOMES NEW PRESIDENT OF ARMENIA FUND ARA AGHISHIAN

On the morning of Thursday, April 2nd, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Mr. Ara Aghishian, Esq., who

was elected President of Armenia Fund at last week's corporate board meeting. Executive Council member Mr. Meher Der Ohanessian was also present at the meeting.

The Prelate and Mr. Der Ohanessian congratulated Mr. Aghishian on his election and commended his years-long service within Armenia Fund. Mr. Aghishian thanked them for the warm welcome and well wishes. He conveyed information regarding the upcoming activities of Armenia Fund, as well as those already underway, and the need for the support and collaboration of the community for the successful realization of those endeavors, expressing his readiness to continue and further the collaboration between the Prelacy and Armenia Fund in this regards.

As the meeting came to a close, the Prelate and Mr. Der Ohanessian wished Mr. Aghishian success in his new position.